

դուրեւամբ ասոնց և ուրիշ այնչափ երկարատեւ պարբերութիւն ունեցող գիւսաւորաց վերադարձը, սակայն կը գիւրացընեն ապագայից այնչափ կարեւոր առաջարկութեանց լուծումը, զորոնք չեն կրնար լուծել արդիւր կարեւոր գործոց պակասութենէն¹ :

Այս համառօտ տեղեկութիւններս ընդհանուր կերպով տալէն ետեւ գիւսւորաց շարժմանցը վրայ, զանց ընելով խօսելու անոնց գլխաւոր երեւմանցը վրայ ու ենթադրութեանց՝ որոնցմով

կը մեկնեն զանոնք աստեղագիտութեան, անյնինք մեր առաջարկութեանը թէ ուր դեօք կրնայ գիւսաւոր մը իր ընթացիցը մէջ մեր հողագնտին հանդիպիլ կամ զարնուիլ, որ էր առաջիկայ հատուածիս գլխաւոր վախճանը. բայց խօսքերնիս առանց ուղեւոր երկարելուն համար, ուրիշ անգամուան կը թողունք կարեւոր խնդրոյս լուծումը :

Կը շարունակուի :

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՓ

Օրբ՝ գեղին խղիւղի : — Գաղղիական օրագրաց մէջ կը կարգանք՝ որ մօտերս կարեր են Գաղղիոյ Բարձր Հռենոս գաւառին Օգրաթ գեղին մէջ գտնուած հնազանդ կաղնին, որուն համար քսանըջորս դարու կեանք ունի կ'ըսեն բնապատումները : Ասոր կոշիւ 24,000 հազարակրամ կը կշռէ, և 5 մեդր երկայնութեամբ է իր տրամագիծը ամենէն հաստ կտորին. կը յուսացուի որ Բաղիւր Պալատէի անպատիւ պարտիզին ընկերութիւնը գնէ զայն իբրեւ հետաքրքրական հնութիւն մը :

Այս ծառը, ինչպէս որ յայտնի կ'երևայ, հին Կեղտաց ժամանակէն մնացած է, և այն անտառներուն ծառերէն մէկն է՝ որոնց մէջ խորհրդական կեանք մը կ'անցընէր այդ ժողովուրդը. և ասկէց եօթը դար առաջ՝ ուրիշ ժամանակակից ընկերներ ալ ունէր քովը, ինչպէս որ կը վկայեն նոյն ասեւնուան յիշատակագրութիւններ :

Այն է ի զատ՝ երկու ուրիշ նշանաւոր կաղնիներ ալ կան ի Գաղղիա, մէկը յԱլուվիլ՝ Սէյն Ստորին գաւառին մէջ, որ 900 տարուան է, և որուն բու-

նը մատուռ ձևացուցած են, իսկ գագաթն ալ զանգակատուն. միւսն է ի Մոնգրավայլ՝ Շառանգ Ստորին գաւառին մէջ, որ 20 մեդր բարձրութիւն ունի, և 9 մեդր տրամագիծ իր ամենէն հաստ կտորին, և 2000 տարուան կ'երևայ :

Թաւառ ինչ : — Տարւոյս փետրուարի 2ին Պել ճիւղ Լիէթ քաղքէն գէպ ի Օրէյ էրթալու ճամբուն վրայ՝ խել մը խողի վաճառականներ անթիւ բազմութեամբ խողի խումբ մը կը տանէին. մէյ մ'ալ յանկարծ թաթառ մը իջաւ այս խմբին վրայ : Անանկ զօրաւոր ու սաստիկ էր քամին, որ անկարելի էր տեղէն շարժիլ ու ճամբան շարունակել. երբոր անցաւ մըրիկը, տխուր զարմացմամբ մը տեսան վաճառականները որ հարկւր քառասուն մատաղ խող խողուած գետին տարածուած էին : Արտաքոյ կարգի է այս գիպուածը, և ասոր նման պատահար մը ինչուան հիմա չէր լսուած թաթառի վրայօք. բայց գէթաղդաբար ստոյգ է, և վաճառականներուն 1,500 ֆրանգի չափ կորուստ հասուցեր է :

Կապած շան խառնածի շէլ : — Ան գեղածախէն երէք բուռ datura stramonium (փշաղից խընձոր), եռացուր գաղղիական մէկ լիտր ջրոյ մէջ. մինչև որ կէսը վերածուի, ետքը խմցուր մէկ անգամէն հիւանդին :

Մէկէն վրան սաստիկ կատաղութիւն կու գայ. բայց քիչ մը ատենէն յորդ քրտինք կը փոխանակէ և քսանըջորս ժամ ետեւ հիւանդը բուրորովն կ'առողջանայ :

Այս գեղս Գաղղիոյ օրագրի մը լըկրան քարոզիչը հաղորդեց, որն որ վերջի տարիներս Անամի պետութեան մէջ աւետարանը քարոզեց, և հիմա Գաղղիոյ նաւատորմին հետ այն կողմերը կը գտուի : Ինքն ալ անձամբ փորձեց այս գեղս, և վաթսուհի հիւանդաց մէջէն, որոնց այս գեղս տուաւ, վաթսուհին ալ առողջացան :

¹ Յանկի աւնուած 224 գիւսաւորաց մէջ, հաշուելով նաեւ 8 պարբերական գիւսաւորներն ալ, 110 հասն աղագինայ են և 114 հասն յեթախաղայ. ասոնցմէ 55 հասն թերաձեւ պարունակ ունին և 169 հասը՝ զուգորդական : Իսկ անոնց արեւմեւոր ձուլթիւնները նկատմամբ արեւուն ու միջրակաց պարունակներուն հետեւեալ կերպով կը բաշխուին.

Ընդ մէջ պարունակաց փայլածուի և Արեւու են արեւամերձութիւնք 40 գիւսաւորաց	
— Փայլածուի և Արեւսեկի . . . 69	»
— Արեւսեկի և Երկրի . . . 58	»
— Երկրի և Հրաթի . . . 44	»
— Հրաթի և Լուսնթաթի . . . 13	»

Ընդ ամենայն 224

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ